

բազում և փագում, քնակարան և փնակարան, բոլոր և փոլոր,  
գանգատիմ և քանքատիմ, գնել և քնել, գուրպայ և բուրպայ,  
դարձնել և թարցնել, զնել և թել, ծիւն և ցիւն,  
ծրի և ցրի, ծող և ցող, ջուր և ջուր, ջնջել և չնչել, ջանք և չանք, և այլն:

Հագագային գրերուն մէջ, որ են ի, իս, ոյ  
ըստ աստիճանի փափկութեան խ միջին է ընդ  
ի և ընդ դ, որով և շատ անգամ լժորդ ընդ ին  
ոչ միայն ռամիկն հնչման մէջ 1, այլ նաև ըստ  
նորինեաց գրութեան, ուստի և հնչման. ինչ-  
պէս հետևեալ բարից մէջ նահասպես և նա-  
խապես, ախուվախ և անուվախ, հաղբ և  
խաղբ, խոյ և հոյ, ան և այն, հոր և հոր,  
թոհուրոն և թոխուրոն, նախնախուռ և  
նահին, թախաք և թահաք, և այլն. բաց ո-

րովհետեւ խ' ըստ արդեայց հնչման մերձաւո-  
րագոյն է դի, ուստի սղագրութեանս մէջ կըր-  
նան մի և նոյն նշանով դրոշմուիլ խ և դ, թէ-  
պէս և երկուքն ևս իրենց սեփական նշանն ու-  
նին, ինչպէս պիտի տեսնենք քիչ վերջիւ:

Նայ տոռերէն իրաքանչիրն իրեն յատուկ

նշանն ունի սղագրութեանս մէջ:

Ուստի մինչև ցայժմ աւանդածնէս հետե-  
ւանք կ'եղնէ՝ որ Սղագրութեանս մէջ սեփա-  
կան նշան ունեցող

6 Զայնաւրք կան, որ են ա, է, ը, ի, օ, ու:

6 Երկրարրաք կան, որ են իւ, ես, այ, ոյ, եօ, եւ:

29 Բաղաձայնք կան, որ են.	8 Լերկք. պ, կ, տ, ծ, ն, զ, ժ, վ: 8 Միջնք. բ, գ, դ, ձ, ս, շ, ֆ: 5 Թաւաք. փ, ք, թ, ց, չ: 3 Հագագայինք. հ, խ, դ: 5 Կայք. լ, մ, ն, ը, ռ, ո:
--------------------------	---

Ուստի ընդ ամէնն 41 նշանագիրք կը կազ-  
մեն սղագրութեանս այսուբենք: — Ուրիշ յօ-

դուածի մը կը թողոնք սահմանելու իրաքան-  
շիր զի՞ յատուկ սղագրութեան նշանն:

1. Քայտնի և ամենամ Փոքուն Ասից գաւառականաց հ  
և տաքէց փոխարքը ապաւածներ, բնակն նաև  
Անհայ և Բաղիչու պայանց կերպանակն Հայուսակին  
Նոյնօրինակ հնարին, որոց Համար բանադրի մը վե-  
հայութիւն (Գար. Վ. Արուեստեան, Համել-Հարուն.)

կը հաւաստէ թե իրենց գաւառային կոկորդական ձեւն  
յառաջ կու ուրիշներ ապաւածներ մը բայց և այսու հան-  
գեր յի գեղեկի այս տեսի հնչմանը ուզագրել նախ-  
նեաց նահասպես գրութիւնն ի նոյնութիւ:

## ՀԱՄԱՍՈՅ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՍՈՒԹԵԱՆՍ ԶՄԱՐԻԲԱՍԵԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԵՆԷ .

ԸՆՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

Ըստ փափագանաց մեծակամբ բարեկամի ուրումն՝ կը փութանք յարել յաւարտ  
Ժեսուրեանս զմարիբասեան աւանդուրեն ըստ Մ. Խորենացոյ՝ և զհամառօս բովանդա-  
կութիւն գէթ էտակն մասանց նորին՝ ի զիւրութիւն ազգասէր և ճշմարտասէր հնախու-  
ղից, որոնք կ'ուզեն յայանել իրենց կարծիքը զտեսութիւնէս մերմէ: Աւելայն փափաքելի  
էր մեզ եթէ յամբողջութեան անդ և յապացուցութիւնն զկոյ առեալ՝ հատանէին իրենց  
վհրոք, որոց տեղիքն և էջերը կը ցուցանեմք երկասիրութեանս զոր իրեկ  
կմախք ինչ ընծայեմք երկասիրութեանս,

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

4. Մովսիսի խորենացւոյ և կամ Հայոց պատմագրութեան ընդհանուր աղբիւրը են՝ Ա. Յոյն անդիր և զրաւոր մատենադիրք. — Բ. Ասորի և պարսիկ մատենագիրք. — Գ. Եղեսիոյ, Մծրնայ և Սինոպի գիւտանագիրը կամ մեհենական պատմիք. — Դ. Քաղզէական հեթանոս մատենագարանք և մատենիք՝ բայց յունական և ասորի թարգմանութեամբ. — Ե. Հնոյն Հայաստանի ժողովրդական երգերն, զրոյցք և վէսքը՝ որք մինչև ցեղ դար կենդանի կը պահուին հայ ազգաբնակութեանց մէջ։ Բայց ըստ իս՝ այս ամէնքն երկու զիսաւոր ժամանակի և դպրոցի կը վերածին, այսինքն նախ քան գքրիստոնէական թուակսնն և յետ այնորիկ։ Առաջնոյն կը վերաբերին դէօթ Գերողիկամ թերոսոսի, Ապողոդորոսի, Արիւդենոսի, կեփաղիոնի, Մանեթոնի, Բաղմավէպն Աղեքսանդրի, Մարիքաս կատինայի, Հերոդոտոսի, Պտղոմէոսեան ճանապարհորդաց, և այլն, երկասիրութիւնքը, որոց հատուածներն կը ներկայացընեն մեզ հին արտմէտական մատենագրութիւնը, կամ զմատենագարան Քաղցէացւոց և Ասորուց՝ յունարէն թարգմանութեամբք։ Իսկ երկրորդին կը վերաբերին ոչ միայն իւագարոս, կամնազրոս, Փղեղոնիոս, Արեսոտոն Փեղացի, և կալիսթենէսի, Փերմիլիանոսի և Ամմիանոսի, այլ նաև Մծրնայ, Սինոպի, Եղեսիոյ, Անոյ գիւտանագիրը և անոնց դպրոցաց մէջ քրիստոնէական թուականին Բ. և Գ. դպրուց մէջ ծաղկով յոյն, ասորի, պարսիկ և հայ մատենագիրք։ Բանասէրք՝ ի վաղուց կ'ենթագրէին հետք ինչ միջին իմման գրականական մշակութեան ուստի ըստ մեր կարծեաց՝ այս երկու դպրոցաց և ժամանակամիջոցաց պարապը լեցընող և զանոնք իրարու հետ միացընող են Ղեկուրնա, Ռէզիւր և այլ և այլ մեհենական մատենագիրք, զորս ընծայէ մեզ Մ. Խորենացի, և այլք կան

ման տակաւին անցայտք առ ՚ի մէնջ։  
2. Բերուստի, Արիւգենոսի, Ապողոսի կորսոսի, կեփաղիոնի, և ու և Մարիքաս կատինայի վրայ եղած հին և նոր քննա դատից կարծիքէն եղակացընելով, ըստ իս, այս երեք ծշմարտութիւնքս ՚ի յայտ գան. Ա. Ամենահին ժամանակի քաղցէարէն մատեանք և դիւանագիրք. Բ. Անոնց վրայէն եղած յունարէն և ասորի թարգմանչաց պարք. Գ. Հին ասորերենի կամ մանաւանդ ասորագաղցէական հնաւանդ հեղինակութիւնք Այս ծշմարտութիւնս նոյն իսկ Մ. Խորենացի իւր Ա. Գրոց Թ. գլուխն մէջ կը վկայէ « Մարիքաս ասորույն ձևորով. քաղցէարէն մատեանի գիւտով (՚ի Մարիքասաց) և ևելլէն բարգմանորեան » յիշատակութեամբք։ Մանրամասն ապացուցութիւնքը տես Բաղմավէպ Հանդ. հա. ԽԱ. Պրակ. Բ. էջ 444—429։  
3. Վերոյիշեալ մատենագրաց խումբը կը կողմէ, ըստ իմ կարծեացս, յոյն՝ քաղցէացի թարգմանչաց դպրոցը, որոյ իրեւ գլուխ և շարժիչ էր հաշակեան ՚ի հնոց ինքոսոս ։ Իսկ անոնց ամենուն թարգմանութեան կամ թարգմանաբար յօրինուած յունարէն և ասորերեն երկասիրութեանց իբրև սկզբնական ազգիւր համարելու է քաղցէարէն մատեանը կամ արեւելեան ազգաց պատմագրական մատենագարանը, զոր յիշէ Մ. Խորենացի։ Ես Աղեքրանդը բաղմավէսի կարծեցեալ երկասիրութիւնը հաւաքածու իմմ էր նոխ՝ վերոյիշեալ մատենագրաց թարգմանաբար յօրինուածոց, զորս Մեծին Աղեքսանդրի ժամանակ և կամ անկէ քիչ յետոյ թարգմանելով՝ ընծայեցին նման իրեւ գիտութեան սիրող Մեծին ասայ մը, որ այնչափ հետաքրքիր էր իրաց արևելեան աշխարհակալուց. և այս պատճառաւ թուի հաւաքածուն այն յորջորջեալ ՚ի հնոց Բաղմավէպ Աղեքսանդրի։ Մեր այս կարծեաց

Հաստատութիւն կու տան ոչ միայն Մակեդոնացի աշխարհակալին պատմա- զիրքն և անոր արևելքի մատենագրու- թեան և քաղաքականութեան մէջ խա- ղացած մեծագոյն դերը, այլ նոյն իսկ վերոյիշեալ մատենագրաց հատուկտիր հատուածք՝ զորո ընծայէ մեզ Եւսե- րիսու 'ի Քրոնիկոնի անդ։ Արդարի ա- մէնքն ևս իրենց պատմագրութիւնը նախաջրհեղեղեան թագաւորներէ և վիպասանական դէազրով կը սկսին, մի և նոյն գունով նկարագրելով, մի և նոյն անուանց և իրաց յիշատակու- թեամբ, մինչեւ անդամ մի և նոյն բա- ռերով և Սոսի և Շարի և Ների շրջ- աններով՝ յայտնապէս կը ցուցանեն թէ մի և նոյն դպրոցի թարգմանիք են և մատենագիրք, մի և նոյն ժամա- նակի գաղափարներով մնած. միով բանիւ, մի և նոյն դիպաց վրայ գրուած հնաւանդ դիւնադրքէ մը թարգմա- նած կամ թարգմանաբար յօրինած էին իւրեանց երկասիրութիւնքը և թէ մի և նոյն քաղդէարէն մատենի բնա- դրուցն կը տեսնուի անոնց վրայ։ Ասոր մանրամասն քննութիւնը տես վերոյի- շեալ Պրակին 125—127 իից էջ։

4. իսկ արդ, որովհետեւ մարդիասեան պատմագրութեան աւանդածներն ես նախաջրհեղեղեան թագաւորաց, Ջըր- հեղեղի, աշոտարակաշինութեան, Քաղ- դէացւոց թագաւորաց աղջաբանու- թեան, Բելեանց և Հայկեանց պատե- րազմին և անոնց անձնական նկարա- զիրքն ևս՝ յետ մանրազնին քննու- թեան մի և նոյն բնադրուցն ունին, և համաձայն կ'ընթանան անոնց աւան- դածին, բաց 'ի կարծեցեալ տարածայ- նութենէ մը, այս ինքն է Հայկայ ազ- գարանութենէն, զոր յանուն Մարիբաս կատինայի և Արքւդենոսի 'ի մէջ բերէ Մ. Խորենացի անկախ յԵւսեբիոսէ, արդ այսպիսի բացառութիւն մը բա- րական և հաստատողական փաստ մը չէ առ 'ի մերժել զամանականութիւն Մարիբասեան կամ քաղդէական աղ- քեր և անոր աւանդածին, ինչպէս կը համարին հակառակորդք . վասն զի

կամ այն է թէ Եւսեբիոս իւր Քրոնի- կոնն յօրինած ժամանակ այն մասին չէ հանդիպուծ, կամ համոզիպելով իսկ՝ զանց ըրած է 'ի մէջ բերել, կամ նախ- նաբար 'ի մէջ բերած է՝ բայց յե- այ ուրիշ հատուածոց հետ Հայոց պատմութեան վերաբերեալ այն չնաշ- խարհիկ աւանդութիւնն ևս անյայտա- ցած է : Ինչպէս օրինակի համար Յու- լիս կեսարին յաջորդող կայսերաց և հիւպատոսաց անուանկը մեզի հասած շեն, զորս Եւսեբիոսի (Քրոն. էջ 397) նախընթաց այս բացատրութենէս ե- րեի թէ յիշած է . «Պատշաճ է 'ի սոյն յարել և զնոսա՝ որբ Յուլիայ կայսերէ ինքնակաթը Հոռվմայեցւոց կացին» :

5. Ուրիշ ապացոյց մի և գոյու- թեան հայկազունի իշխանաց կարէ լի- նել ըստ իս՝ զոր ընթեռումք առ Եւ- սեբիոսի (Քրոնիկ. Ա. մասն, էջ 40), Քաղմակէպն Աղկեսանդրի՝ Բերոսոսի մատենէն առնելով՝ 89 թագաւորներ կը թուէ Բարեեացւոց՝ յետ Ջրէնցեղի ցկործանումն նորա 'ի Մարաց, և 45 թագաւորներ Ասորեսատանեացց, Շամի- րամէն ցփուղոս . իսկ Քաղդէացւոց 49, և Մարաց 19, որոնց 9ը բանաւոր կ'ա- նուանէ : Սակայն այժմ Բարեեացւոց և Քաղդէացւոց թագաւորներէն 3 և Միայն կը գտնենք հուն : Իսկ Բերոսոսի յիշած այն երեք պետութեանց թագաւորաց գումարն 'ի միասին 199ի կը հասնի . և ըստ ճշգագոյն ժամանակագրութեան Պոսիւէի, կուարսոնի և Փէկըսի 81 թա- գաւորոց անուանկըն մեզի հասած են և ծանօթ 'ի ժամանակագրաց . իսկ մնա- ցած 118 թագաւորաց վրայ ասակաւին խորհրդական քօղ մը կը ծածկէ, թէ- պէս և արդի սիպաձև արձանագրու- թեանց ընթերցմամբն և նորագիւտ ա- նուանց հնարագիտութեամբ կը ջանան բանասէրք պարզել զայն : Ուստի ըստ իմ կարծեացն Ասորեսատանեացց և Մա- րաց այն անյիշատակ իշխանաց և բռնա- ւորաց Քուղյոն տակը ծածկուած, և հե- տեսպէս լինելու են նաև մարիբասեան պատմագրութեան կամ Մ. Խորենա- ցւոց յիշատակած Հայկազունի և կամ

Հայկազանց վրայ իշխող իշխանաց անուանքը, զոր Արքագենոս անդամ յիշած էր յիւրում ազգաբանութեան, ըստ Խորենացւոյ: Անոնց բռնաւոր կոչուելուն պատճառն 'ի Քաղդէացւոց և 'ի Մարաց՝ ուրիշ բան չէ: Բայց եթէ վասն զի ժամանակ ժամանակ Մեծին Արմենիոյ անկախութեան համար ապատամբութեան փորձեր ըրին, և երբեմն թօժափելով իսկ օտարին լուծը՝ բռնացեր են այն դաւառաց և ժողովրդոց վրայ՝ որոց իշխան կարգեալ էին, ընդգէմ միահեծան իշխանութեան Աստրեսանեաց և Մարաց: Այս բանս հաւանական է և համաձայն պատմութեան, եթէ Հայոց պատմական քաղաքական և կրօնական սերտ յարաքերութիւնքը նկատելու ըլլան ընթերցողք: Ապացուցութիւնները տես Քաղմանդ: Հանդ. Հոտ. ԽԳ. Պրակ Ա. էջ 12-16:

#### Գլուխ Երազուր

1. Հակառակ Թրէրէի, Ռբնանի, Գաղըրմէրի և համախոհից նոյցա՝ ապացուցած եմք թէ Աղեքսանդր ոչ միայն ժամանակ ունեցաւ այլ և թարդմանել իսկ առուա նինուէի և Եկրատանայ քաղդէարէն զիւանագիրքը<sup>1</sup>: զոր յիշեն Մ. Խորենացի, և Մարիբաս և այլք: անտի հանեց Հայկազունեաց պատմութեան մի մասն, իսկ մնացածը ինքն անձամբ Հայաստանի երգոց և կենդանի աւանդութեանց վրայ հիմեալ երկասիրեց:

2. Վաղարշակայ ժամանակ ինչպէս անկէ առաջ և յետոյ քրիստոնէական թուականին մէջ համանուն նինուէ քաղաք մը կար՝ իրբու ոստան Ասորւց ընդ գերիշխանութեամբ Պարսից, և թէ յետ վերջին Կործանմանն չմնաց

1 Ա. Օքոսահնոս Յաղագս Քաղաքին Ասուռծց. հասոր Ա. գիրք ԺԲ. Դ. Ժ. Ը. Վայէ այսու Խոսելզ, զնանութ Հայաստան ապահանակաց անկանի առաջարկ մէծի առաջարկ մէծի գրեալ առ Ողբեմիադաս մայր իւր՝ յայտարար վկասանութիւն քրժի ուրութեանցւոց վրայ զիւանագիրքը: զոր առեալ էր նորս 'ի մէհնական դրց: և 'ի նմա բովանդակեալ

միշտ հետակորոյս 'ի գետնի, այլ հանդոյն Տրոյից նորոգելով անցաւ յաղդ գաց յաղդս, բաց 'ի բազմաթիւ պատմագրաց և ճանապարհորդաց ընդ Տակի բառունի՝ վկայ են նաև այս ճշմարտութեանս հոռվմէական կայսերաց կղոգիսի, Տրայիանոսի, Մաքսիմիանոսի և Գորգիոսի Պիոսի դահեկանները նինուէի կզօղիսով (Ninive Claudiopolis) արարուածովք հանդերձ: Բ. Արդարուա առ Ներսեսի թագաւոր Ասորեսանի կրած պատճէնը, զոր Մ. Խորենացի եղեսիսից դիւանէն առնելով մէջ բերէ (Գիլք Բ. Գլ. Էջ 231):

3. Մարիբաս կատինս ոչ եթէ 'ի նինուէ, այլ 'ի Բահէ կամ Բակտրաքաղաքը գնաց, ուր թագաւորէր Արշակուսափի և հետեապէս, բատ մեզ, Արշակ ոչ թէ նոյն ժամանակի նինուէի զիւանները ետ բանալ առաջի Մարիբասայ, ինչպէս ոմանք սխալ մեկնելով զՄ. Խորենացի՝ դատափեաթեցին զնա, այլ Բակտրիայ մատենադարաններն, որք յառաջագոյն լեւալ էին 'ի հինաւուրցն նինուէ, և ապա ժամանակաւ անցեալ 'ի ձեռու Մարաց և Պարսից: Այս ենթագրութեանս ապացոյցները տես Բազմ. Հանդ. Հոտ. ԽԱ. Պրակ Գ. էջ 225-229:

#### Գլուխ Երբորդ

1. Բատ մեր կարծեաց Մարիբաս կատինս էր արդարե ժամանակակից վաղարշակայ և պատմազիր ոք մարասորի յաղցէ, զոր յիշէ և Ս. Հերանի մոս (Մեկն. Եղեկ. Հա. Ե. էջ 12), և գրեց նա բաց 'ի Հայոց նաև ուրիշ արևելեան ազգաց պատմութիւն մը, որոյ համար կը զիմէ առ նա Ս. Հերոնիմոս:

Կային թագաւորութիւնը, զորս և յունականն չեկուցան պատմութիւն. յորս միջ Ասորեսանինայցն թագաւորութիւն ասի 'ի թը մշի անդ Աղեքսանդրի բաւեալ ասելիք քան զնինդ հազար ամ. . . իսկ զՊարսիցն և զԱսկեդոնացւոց տերութեանն միջն ցԱղեքսանդր մգէ յամ ու թէ հազար, և այլն :

2. Մար Աբասն այն՝ զոր համարին գ. Պատկանեան և այլք ոմանք՝ իրեւ գրիչ ոք թ. կամ գ. դարու Եղեսիոց դպրոցին, ըլլալու է Մար Աբաս Մը- ծուբնեցն սովորական, զոր յիշէ Սե- րէոս: Անհիմն է հակառակրդաց ընդ- դիմադրութիւնն թէ Մար վերադիրն հայր կը նշանակէ ասորերենի մէջ, և թէ թ. և գ. դարու Եկեղեցական իշխա- նաւորաց կը տրուէր միայն: Այլ ըստ իս' ինչպէս առ Հռովմայեցիս 'ի հնումն Pater ծերակուտի անձանց կը տրուէր և առ Հայո՛ Հայր և Տէր իշխանաց կը տրուէին, բայց յետոյ սեփականեցին ժառանգակուրաց Եկեղեցւոյ, այսպէս էր և առ Ասորիս: Բաց աստի, նաև 'ի հեթանոսութեան յիշին Մար մակա- նուամբ անձինք ոմանիք:

3. Մ. Խորենացւոյ Մար իրասն ե- ղած է աղրիւր և բնագիր սերէոսեան արձանագրութեան, զոր տէտ ոք ան- անուն աղաւաղեղով՝ մասամբ ինչ Մար Աբասայ Մծուբնեցւոյ ընճայած է և մասամբ ևս Ագաթանգեղոսի: Ասոր մանրազնին բաղդատութիւնն ետպա- ցացները տես Բաղմ. Հանդ. վերոյ- յիշեալ Գրակին յէւն 229—237:

#### Գլուխ Զուրու

1. Ընդդէմ արդի բանասիրաց ո- մանց և Մ. Գարագաշեանի ապացու- ցած եմք, թէ արդարեւ ամենաշին և անյիշատակ ժամանակաց 'ի վեր (ըստ Պ. Լընորմանի, Առձ. պատմ. հտ. Ա. էջ 511—516) Anarienne կողուած թե- ռագրութեան կիրառութիւնն 22 դար նախ քան դիրիստոս սկսեալ՝ կը հա- նի ցՄեծն Աղեքասնդր և ցյաջորդս նորա:

2. Թէ՝ յետ այնորիկ այն արևելեան հին ազգաց մատենագրաբաններն յե- ղան 'ի յոյն և յասորի բարբառ, երբ արձանագրութեան առվորութիւնն դա- գրեցաւ, և սկսան գրել ալփարետիւ 'ի մագաղաթի և յայլ ինչ նիւթու, յո- րոց այնուհետև կարու էր օգտուիլ և իրօք օգտուեցաւ Մար Աբաս՝ Հայկա- Պատմ. գ.

զոնեաց պատմութեան մտոին, Առ այս 'ի մէջ բերուած են պատմական և եզրակացուցիչ ապացոյցներ. Բաղմ. Հանդ. հտ. ԽԱ. Պրակ Դ. էջ 309—314:

#### Գլուխ Հութերութ

Ապացուցած ենք թէ անկարելի բան չէր Մար իրաս կատինայի համար՝ յեղուլ զաւանդութիւնս քաղզէարէն մատենագրաբանին 'ի յոյն և յասորի բարբառ, որովհետև այս երկու լիզու- ներն ես այն ժամանակ տիրած էին ա- րևելեան ազգաբնակութեանց մէջ, ըստ վկայութեան Պ. Սահասուի հմտու- գերմանացւոյ, և այլոց յիշատակարա- նաց, զորս մի առ մի և ուշի ուշով 'ի մէջ բնրած ենք: Ըստ վկայութեան իւ- սերիսի, Յովանապոսի և Ասեմանիայ՝ բաղմաթիւ մատենագիրներ ունեցուն Ասորիկ, որք թէ առ տէրութեամբ Ասորւց, և թէ առ իշխանութեամբ Քաղցէացւոց և Ասորեստանեայց, զյոդ ընդ Սանկոնիսաթոնի և Մնազէի ծաղ- կեցան յերբեմն ժամանակի՝ Դամաս- կոսի, Տիւրոսի, Սիդոնի, Հեղիուպոլ- սի, Բարեելոնի և Նինուէի մէջ: Ուստի ընդդիմախօսից գծուարութիւնն աւե- լի նոր ասորերների համար են, որ քրիս- տոնէական թուականին թ. և գ. դա- րուց մէջ բարգաւաճեցաւ, և ոչ եթէ բոլորովին նոր ինչ հնարեցաւ, քան թէ հին տարրա—քաղցէարենի հա- մար: Սակայն հակառակրդաց կարծե- ցեալ այդ Աքիլլէսն ես իւր գոհացու- ցիւ լրւծումն ստացած է մեր երկասի- րութեան է. դիմոյն մէջ. տես Բաղմ. Հանդ. հտ. ԽԱ. Պրակ Դ. էջ 314—318:

#### Գլուխ Վաթերութ

4. Մարիքասեան երկասիրութեան բոլանդակութիւնն ուղիղ գատելու համար պէտք է լաւ ուշ գնել, թէ Ա. Աշ մարիքասեան երկասիրութեան նախ. նական աղրիւն կամ քաղցէարէն մա- տեանն է հոն ամէն բան աւանդողն, և ոչ ալ զայն հաւաքող և ընդարձակող

Մար իբասն : Բ. Ալէկ զանաղանելու է թէ Մ. Խորենացի իրք լ'կ թարգման կամ հրատարակող չէ Ասորի հեղինակին և ուրիշ աղբերաց, այլ իրք ընդարձակող, յօրինող և ճարտար մոտենագիր, վարժ և հմտութիւն արիելեան լեզուաց, կրօնից, պատմութեան և վիպասանական աւանդութեանց, որոց 'ի զբաւոր և յանգիր աւանդութեանց օգտուելով, և իւր սեփական մոտաց և դիտութեան երկունքն ևս անոնց հետ զուգելով՝ կը վճռէ և կը զրէ, երբեմն խրժին և սեղմ լակոնաբանութեամբ, և երբեմն քերթողական և հայրենասիրական խանդիւ բորբոքած : Գ. Այս կամ այն աղջի մասնաւոր ժամանակադրութիւնը չի գործածեր, այլ մերթ Հըեց գրոց ոճոյն կը հետեւի, մերթ Պարսից թագաւորաց հետ բազգատերվ և երբեմն իրեն յատուկ ժամանակադրութեամբ, ըստ ՈՒգդէրի :

2. Իւր Ա. զրոց Թ. գլուխն մէջ մարիքասեան երկասիրութեան հեղինակներէ անուններ կը յիշէ 'ի բարդէկական մատենէն, Զբաւան, Ցիտան և Յարեկուսէ, որք են Ծննդոց Սիմ, Քամէն Յարէիծն, Զրուան կամ Զարվան (Zarvan) է զանդէկերէն անուն ինչ վուզիմի, որոյ Յոյնք կուսոնոս անունը կուտան, և գտանի 'ի Քրոնիկանն Եւսեբիոսի : Զթաբեթոսմէն ումանք յունարէն Յարեկուս (Jaretoς) կարդացին, (որոյ վրայ, կը համարի Մ. Գարագաչեան, թէ Խորենացի աւելցուցած ըլլայ տըզիսութեամբ թէ մասնիկը), բայց յայտնապէս կը սիսալին . ուսաի մենք կվալատի, Լընորմանի և Փիկտէի վկայութեանց վրայ հաստատեալ կ'ըսենք թէ յիրաւի Յարեթոսմէն գերազական անուն մ'է, բայց սանսկրիտ Ճարասիրական բառ կամ Խարակիսի իրաւութիւնն է, որ յեղապէս անուն է Յարմէն (Prométhée), ըստ դիցարանութեան Հելլենաց :

3. Դարձեալ, Մ. Խորենացի Մերսդ,

Սիրաք և Թակլար երեք անուններն եւ ի մէջ կը բերէ, որք նոյն են Ծննդոց Գոմերի, Թիրասոյ և Թորդոմայ հետ. բայց Ծննդոց ազգաբանութեան հետ խոսոր համեմատութիւն ունին . այսինքն առ Մ. Խորենացւոյ կամ ըստ մարիքասեան աւանդութեան առանձին ծնունդը են Մերոդ և Սիրաթ, իսկ Ծննդէակառակին Ծննդոց ազգաբանութեան մէջ Գոմեր և Թիրաս 'ի միում գծի կան իբրև անմիջական որդիկի թաբեթի, և յերկրորդում գծի գտանի Թորդոմ (Թակլար) . այս ըստ մեզ բաւական ապացոյց մ'է ընդդէմ են թագրութեան Մ. Գարագաչեանի, որ զՄերսդ և զՍիրաթ՝ Գոմերի և Թիրասոյ անուանց տառերու փոփոխմամբ Մովսիսի Խորենացւոյ խարդախուռ թիւնն եղած կը համարի : Արդ ըստ մեր կարծեաց ինչպէս Հայոց Անահետըն Լատինացւոյ Տիանափառ չըջուն տառդարձութիւն մի է, բայց Հայոց Ծննդայելի է և ոչ մասնականի ումենմն . այսպէս և Մերսդն և Սիրաթ՝ Հնդամատենին Գոմերի և Թիրասայ տառդարձութիւնն, այլ Ասորեստանեաց կամ Քաղղէտարէն մատենին Ծննդայելի է, և ոչ եթէ Հայոց պատմահօր խարդախուռութեան :

4. Մ. Խորենացի ըստ մարիքասեան աւանդութեան Հայոց նախահօր և անոր յաջորդաց անուանքը ցԱրա Գեղեցի 'անմիջապէս 'ի Թորդոմայ տայ սերել և իջուցնէ անտի այսր, համաձայն վարուելով ընդ ժամանակագրութեան Ծննդոց գրոց և Ասորեստանեաց : Բայց իրքն հաստատուն և որոշ կէտմեր պատմութեան, մարթէ նկատել ըստ իս յԱրամայ և այսր, զրո զնէ իրքն ժամանակակից Նինոսի և Աբրահամուն :

5. Հայկայ յաջորդաց յիշատակութիւնը կ'ընէ երկրորդ անգամ՝ առնելով յեթրուգենսսէ . բայց այս անգամ յԱրայէն 'ի վեր ելանէ ցԱրմենակ, առանց յիշելոց զՀայկ : Շատ հետաքըրքական է Խորենացւոյ բացատրութիւնն, թէ « և եւ զայս մեզ Աբրակենսու »

յիւրում առաջնում արձանականի 'ի մանր ազգաբանութեան ասէ ». և ապացոյց է թէ նա յառաջագոյն ականատես եղած էր Արիւղենոսի այդ գըրութեանն կամ Աղեքսանդրիոյ մատենադարանին մէջ կամ յեղեսիա և կամ այլուր. բայց Հայոց պատմութիւնը դրած ժամանակ՝ չկարաց ունել զայն: Սակայն մենք բաց ՚ի զանազան ենթադրութեանց՝ այս կերպով կը համարիմ լուծել այս կնճիռս. այսինքն է, վերոյիշեալ երկու (բայց տարբեր կարգաւ) Հայկայ և անոր յաջորդաց անուանքն կը գտնուէին արդէն մարիքասեան երկասիրութեան մէջ. որոյ հեղինակն Հայկազոննեաց պատմութիւնը յօրինած ժամանակ՝ անոր նախնական ժամանակի իշխանաց ազգաբանութիւնը քաղդէարէն մատենէն և կամ անոր թարգմանութենէ մը առնելով՝ ընդհանուր կերպով մը յիշած է զանոնք. այլ յետոյ նոյն հեղինակն հանդիպելով (հաւանօրէն վերոյիշեալ Աղեքսանդրի Բազմավիպի հաւաքածոյից մէջ) Արիւղենոսի հատուածոց միոյն, զոր հեղինակն նմանապէս քաղդէարէն մատենադարանէն թարգմանած էր, և քաղդէարէն բնագիրը թարգմանած կամ թարգմանար յօրինած ժամանակ՝ այդ փոփոխութիւնն ըրած էր, Մար իրաս առանց անդրադառնալու՝ ուղերէ զայն 'ի մէջ բերել 'ի հաստատութիւն Հայկազոնի իշխանաց ազգաբանութեան, իրբի նոր ազրիւր համարելով Արիւղենոսի այդ աւանդածն՝ մինչդեռ իրօք ինչպէս ըստեցաւ՝ մի և նոյն քաղդէարէն մատեանն եղած էր: Խակ Մ. խորենացի յետ ժամանակաց տեսնելով այն անուանց կրկին յիշատակութիւնը Մարիքասայ երկասիրութեան մէջ յանուն Արիւղենոսի, այն պատճառաւ յԱրիւղենոսէ աւանդած կը համարի. և այս' Մ. խորենացւոյ վերոյիշեալ խօսքերէն իսկ կ'իմացուիք. ուստի և անոր «'ի մանր ազգաբանութեան առաջին արձանական» ըստածը, 'ի Մար իրասայ աւանդած ազգաբա-

նութեան արձանականն համարելու ենք և ոչ եթէ Արիւղենոսի:

6. Մարիքասիրութեան մէջ Արամէն սկսեալ ցվահէ աւանդած իշխանը և թաղաւորք՝ մի միայն ժառանգական յաջորդութիւն և ազգատոհմ չեն կազմեր, այլ զանազան. ուստի և հետևապէս, ըստ մեր կարծեաց, ոչ թէ մի միայն՝ այլ երեք բայց իշարձատե հարստուրիւնք յաջորդեցին Հայկազունեաց իշխանուրեան մէջ: Առաջինն սկսաւ Արամաւ, և անոր քաջագործութեամբք ատրածեցաւ ընդ ծով և ընդ ցամաք, յարեմնուս և 'ի հարու. երկրորդն Պարոյիրի և երրորդն Տիղրաննաւ: Այս յայտնապէս կը տեսնուի ոչ միայն Մ. խորենացւոյ Ա. զրոց իլլ և իդ գլխոց մէջ ըրած բացարաւութենէն, այլ զի Ա. արտաքին պատմագրութիւնն այս երեք թագաւորաց անուանքը կը յեշէ և անոնց մասին գրեթէ կատարեալ համաձայնութիւն կը ցուցանէ տոհմային պատմագրութեան հետ. Բ. սեպածե արձանագրութեանց մեզի ընծայած պատմութիւնն է հոյն Հայաստանի երգերն և զրոյց լւա ևս կը հաստատեն զայն:

7. Յայսմ ևս մարիքասեան աւանդութիւնն Հայկազոննեաց մասին գործես գլխութիննոյն բնագրոշմն ունի՝ զորին ընծայեն մեզ հատուածք յերսուսի, Արիւղենոսի, կեփավիտինի և Աղեքսանդրի Բազմավիպի. ուրիշն մի և նոյն քաղդէարէն մատենէն հանուած են յօյն և ասորի թարգմանութետուր, բայց Հայաստանի նախապատմական ժամանակի մուսայից և յիշատակադիր տարեգրաց աւանդութեամբք ճոխացած:

8. Հոյն Հայաստանի անդիլ աւանդութիւններն, վորս տսհմային մատենագիրք յիշատակեն Վեպք, Երգք Վիպասանուրեան, Երգք բուելեաց, Զըրոյցք և Արասպելք անուանակութեամբք, ըստ մեր կարծեաց, երկու զիստար գասակարգութեան կը վերածին, այս ինքն է, Գիրք ժողովածոյը կամ ժամանակարգութեան երգք վիպասանուրեանց: Ուստի և հարկաւ ոչ

միայն կրկին պարբերութեան ժամանակի, այլ նաև կրկին նիւթոց և հեղինակութեան կը վերաբերին։ Առաջին պարբերութիւնն կը պարունակէ բոլոր Հայկեան հարստութեանց ծրադիծ պատմութիւնը ցՎահէ, բայց ընդհատեալ և խառնաշփոթ գիտք լի, զոր կարենք կոչել դիցազներուրիւն կամ մենենական պատմուրիւն, և անոնց հեղինակներն ես յորդորչել սեփական անուամբ վիպագիրս և կամ մենենական և քրմական պատմագիրս։ (Խորենացի, զիրք Բ. զԼ. ԽԸ), որպէս էին առ եզրապացիս և առ այլ աղինս, Այս երգոց և հեղինակաց նիւթեղած եղած են Հայկաց, Արմենակաց, Անուշաւանաց, Արա Գեղեցկին, Առլէզներու, Շամբամայ, Վահագնի, Բիւրասպի Վժգահակայ, Բարձամու և այլոց սոյն օրինակ կրօնական իրաց և զիցազանց արարուածներ։ (Տես Մ. Խորենացի, Ա. զԼ. Ժ. ԺԵ. ԺԷ. ԺԸ. Ա. և ԺԴ.)։

Խակ Արտաւազգայ, Արտաշեսի, Արգամայ, Սամինական, Մարաց գերեաց, Վահէի, Տիգրանայ, Պարոյրի, Կոռնակայ, Սկայրորդւց, Արամայ և քանի մի այլ իշխանաց և գիտաց վրայ աւանդածներն՝ կը կազմեն ժամանակագրական և պատմական մասը. և են գործ յիշողուրեան վերակացուաց կամլաւ ևս արքունի դպիրներու։ (Մ. Խորենացի, Ա. զԼ. ԽԸ)։ Ասոնց և բոլոր վերոյիշեալ կէտերու քննութիւնն և ապացոյցները տես Բաղմավէպ Հանդ. հոտ. ԽԸ. Պրակ Ա. էջ 35—49։

#### Գլուխ Խօթերը

Իբրև իրողութիւն ինչ հաւանականագոյն ըստ ինքեան, և յաւանդութիւնս ազգիս և յանուանակոչութեան աշխարհիս և ևս պատմական վկայութեամբ Մարիբասայ և այլոց մատենաց վրաց ապացուցեալ պէտք է ընդունել զգոյնութիւն Հայկաց՝ իբրև նախահօր և նախապետի ազգիս Հայոց կամ Արմենիներու. վասն զի վկայեն այսմ նախ

Դիրք Հրէից և հեթանոսաց, կոչելով զշայս և վլլրմենիս որդիս թողարմայ. իսկ որովհետեւ (ինչպէս ցուցաւ) Հայկ է անմիջական յաջորդ թողարմայի (թորգոմայ), և Հայք յանուն Հայկայ կոչին Հայ, որպէս և յանուն թող-Արմայի Արմէնք. ուրեմն եղրակացութիւնն ինքնին յայտնի է։ Բ. Տոհմային դրաւոր և անդիր աւանդութիւնք և մատենագիրք զինքեանս կ'անուանեն ոչ միայն թորգոմեանս, այլ և Հայկեանս։ Գ. Ընդդէմ հանեմք առ այս՝ Մ. Գարագաշեանսի զիկայութիւն Բուղանդայ, որ կ'ըսէ (Ե. Լ. Վ. Սկային զներսէս ... ամենայն սահմանք Հայոց, հայ լեզուն առ հասարակ)։ Եւ Զենոր Գլակ խօսելով 'ի թզթի ուրեք զՀայոց՝ կ'ըսէ։ Զազդդ Հայկազնեան ։ Ուրեմն անտեղի է համարել զՀայկի իրբեանուն ինչ լոկ վիպասանական։ Գարագաշեանսի ասարկութեանց լուծումը տես Բազմ. Հանդ. հոտ. ԽԸ. Պրակ Բ. էջ 123—130։

#### Գլուխ Անթերը

Ազգս մեր և աշխարհս երեք վերագիր անուաններ կրած է յիւր վերայ 'ի նախապատմական ժամանակաց 'ի վեր, այսինքն են Արմենիք կամ Արմենիա, թողարմայ կամ թորգոմացիք, Հայ և Հայաստան։ Առաջինն սովորական էր առ արփական աղինս, երկրորդն առ սեմական աղգս և 'ի լեզուս, իսկ երրորդն առ Հայս և առանին թէպէտ և երեքեան խակ անցիշտառկ ժամանակի հնութեան մէջ կ'ընկղմին, բայց ըստ մեղ՝ անոնց ծագումն յաջորդաբար եղած է և յայլ և այլ աղգապետաց յառաջ կու գան։ Թորգոմացիք ըստուած են՝ ըստ մեր կարծեաց 'ի Թորգոմայ, որոյ անմիջական սերունդ կը համարուի Հայկ։ Հայ և Հայաստան 'ի Հայկայ ծագին, և ոչ թէ Հայկ անունը 'ի Հայ բառէն, ինչպէս համարին ումանք նուազական կարծելով զայն։ իսկ Արմենիա և Արմէնք՝ յԱրմենակայ անտի յառաջ կու գան, որ է

Հայր և առաջնորդ երկրորդ գաղթակամ՝  
նուժեան ՚ի Հայաստան :

Գլուխ Խուներորդ

1. Արարատայ կամ Ռւրարդւյ ա-  
նուան ծագումն և նշանակութիւնն,  
ըստ իս՝ երկք ազգաց աւանդութեան և  
լիզուաց մէջ պէտք է օրմնել, այսինքն  
է սեմականին, ինչպէս են Երրայեցիք  
և Ասորեստանցիք, արիականին կամ՝  
զանդիկ լեզուաց մէջ, հուսկ աժամ հայեն-  
րենի և հնոյն Հայաստանին ահանդու-  
թեանց մէջ: Հնդամատեսանն թէպէտ  
և իբրև պատմական և զրաւոր լիշտ-  
տակարան ամենէն հնագոյնն է՝ որ ՚ի  
գործ ածէ զայն, և այն բառին Երրայե-  
ցիքն լուծումն է Ար կամ հար (լեառն)  
և րած (սասանումն) որով լինի Լեառն  
կամ Երկիր սասանման, բայց ըստ իս  
աւելի հաւանական է կարծել թէ սցդ  
անուան ծագումն և գործածութիւնն  
սանսկրիտ լեզուէ յառաջ զայ, և թէ  
նախ արիական և յարեթածին ազգա-  
բնակութեանց մէջ կը գործածուէր, ո-  
րոց մէկ ցեղն ևս Հայք էին կամ Ռւ-  
րարդիք (Ալարոտեանք՝ ըստ Հերոդո-  
տոսի և այլց), և անոյն աշխարհա-  
զրական գրիցը սեփականեալ. յորոց  
ապա առաւ Հնդամատենին հեղինակն,  
և Ասորեստանցիք ըսին Ռւրարդիք կամ  
Արարդին: Հայք մերթ Արարատ կը  
գրեն համաձայն սեմական ազգաց, և  
մերթ Այրարատ կը կոչեն, համաձայն  
սանսկրիտի կամ արիական ազգաց  
Aryaratha (Այրարատ):

2. Մ. Խորենացի (Գիրք Ա. զլ. ԺԵ. և ԺԶ), և Փաւաստոս Բուզանդացի՝ Վեր-  
ջին մասնիկը համաձայն արիականին  
դաշտ կամ բնակութեան տեղի թարդ-  
մանեցին, իսկ առաջին մասնիկն իբ-  
րև յատուկ անուն համարելով ըսին  
Արարդ դաշտ: Սակայն այս մեկնու-  
թիւնն ոչ ուղիղ թուի մեզ. վասն զի  
Արարատ բառն կամ պէտք է ամրու-  
ջապէս յարիական և ՚ի զանդիկ մաս-  
նրկանց կազմուած ըլլոյ և կամ ՚ի հայե-  
րենէ: Ուստի կամ Այրարատն հայե-

րէն այր արաւոյ կամ արաւարիք  
թարգմանելու է, և կամ արիական  
Ար կամ' Arya (սպիտակ, ազնիւ) և րած  
կամ' ratha (տեղ, բնակութիւն) մաս-  
նրկամբ, որ լինի բնակութիւն ազնիւ  
կամ սպիտակ (ցեղի), ըստ վկացու-  
թեան բիւռնուֆի, և շատ աւելի ճիշդէ,  
ըստ իս, որովհետեւ այն արիական ըս-  
պիտուի կամ' աղնի: յաղգաց՝ սերեալ  
ցեղ ինչ էին նաև Հայք կամ Արմէնք  
թանին և հետեապէս ոչ եթէ Արարա-  
տըն ուղղակի յԱրայէ՝ այլ Արա յա-  
տուկ անունն զանդկերէն Ար կամ' Ա-  
րայ հասարակ անուանէն ընկալաւ իւր  
յորջորջումը. յետոյ ժամանակաւ Արա  
հաստատելով այն տեղ իւր բնակու-  
թիւնը (րած), Երկիրն ալ ըսուեցաւ Ա-  
րայի կամ սպիտակ ցեղի Երկիր: Ար-  
գարեւ հնդկային և արիական ազգա-  
բնակութեանց շատ տեղեր այս պատ-  
ճառաւէ որ բատ (րած) կը վերջանան:  
Բնդարձակ ապացոյցները տես բազմ:  
Հանդ. հտ. Խթ. Պրակ Բ. էջ 133-136:

Գլուխ Խուներորդ

4. Արմէնիա անուան ծագումը ո-  
մանք ընդ Պօչարի՝ հար (լեառն) և  
Mimni (Մինուց) յառաջ եկած համա-  
րին, որով լինի լեառն կամ Երկիր Մա-  
նաւազայ: Սակայն մենք աւելի հաւա-  
նական կը համարինք թէ յԱրմենակայ  
առած է այդ անունը, որ նոյնպէս  
զանդիկ Ար (ազնիւ) և Մեն կամ  
Meny (մարդ) մասնիկներէն կը բաղ-  
կանայր. և արդարեւ Արմենակ եղաւ  
յետ Հայկայ՝ որ Երկրորդ գաղթակա-  
նութեամբ տարածուեցաւ Հայաստա-  
նի մէջ, և բոլոր այն Երկիր ընդարձա-  
կութեան և ազգաբնակութեանը վրայ  
դրումեց իւր անունը: Արմենիա անու-  
նը կը տրուէր ՚ի հուսմն բոլոր Մեծին  
Հայաստանի կամ Արմենաստանի. իսկ  
Մանաւազեան Երկիրն մասնական նա-  
խարարութիւն ինչ էր մեծին Արմե-  
նիոյ. որով Արմենիոյ ծագումը չէ մարթ  
՚ի Մանաւազայ յառաջ եկած համա-  
րիւ:

2. Յետ այնորիկ Արամ իբրև առաջին թագաւոր և աշխարհակալ տիրելով Որմենից և ընդարձակելով անոր սահմանները՝ նաև իրանի վրայ դրոշմեց իւր անունը. յորմէ կոչի թերւուսի ի զիրս Զէնդավէստայ, Արգան կամ Arram.

3. Արմենիոյ անուան յիշատակութեան իրրեւ հնագոյն և պատմական հաւաստիք է Դարեհի վշտասապեայ սեպածե արձանագրութիւնն, յորում 'ի մէջ նուաճեալ զաւառաց զտանի և Արմենիա: Բայց վերորիշեալ մեկնութեամբ շատ հաւաճական է անոր հընութիւնը 'ի վեր հանել ցԱրամ'ն ցԱրմենակ, անդր ևս գուցէ և ցթորդարմա:

4. Հայք վեցերորդ դարու՝ նախ քան զբիրստոս, կամ թորգոմացիք՝ չեն օտարասեռ ժողովուրդ ինչ Որարգւոյ ընակիչներէն կամ յԱլարսահեանց, և ոչ իսկ 'ի Փարւգացւոց սերեալ և գողթեալ 'ի Հայս. այլ մի և նոյն ցեզի մի մասն է՝ որ Արամայ աշխարհակալութեանց հետեւելով և սուրեառութեամբ տարածեցաւ 'ի թեսազիա և 'ի Կապադովիիա, և անդ հաստատեցաւ. բայց յետոյ նեղուելով յօտարասեռ ժողովրդոց՝ անոր մի մասն վերագրձաւ յարեմսեանն Հայտասան, որոց իշխնեցին զառաջննն երաւանդ և Տիգրան, և վերջնն ձգեց Հայկազունի թագաւորութեան երկրորդ հարստաթեան հիմը, որ շատ երկայն չուեց, այլ ներքին յեղափոխութեան մի առթիւ՝ Դարեհի վշտասպեայ հարկատունակն եղաւ. Այս մասին Հերովասոսի և Պ. Լընորմանի կուրօիքն և առարկաթիւնքը լրելով՝ բազմաթիւ ապացոյցներ 'ի մէջ բերաւած են 'ի Բագմ. Հանդ. հտ. Խթ. Պրակ Գ. Էջ 220—238:

5. Անոնց ձեռքով զօրացաւ Հայկազունի կուսակալն մեր Զարեհ յարեմուտա. նոյն ժողովուրդն մեծ գեր խաղաց Արշակունի թագաւորութեան կանգնան միջոցին և Արտաշեսի, Տիգրանայ և Միհրգաւատոյ պատերազմաց և յաղթանակաց մէջ. նոյն Հայերն

կացին 'ի Թրակիա դ. Ե. Զ. և է գարուց մէջ և Բիւզանդական կոյսրութեան բազմաթիւ թագաւորներ և քաջամարտիկ զօրավարներ հանեցին ընդէմ Աւարաց, Հոնաց, Գոթացւոց, և այլն. անոնց յաջորդներն և սերունդք առիւծի կորեանց նման որչացած կը սպասէին Տաւրոսի և Անտիտաւրոսի լերանց մէջ, և հուսկ ապա հալածելով զբոյնս՝ հաստատեցին զթագաւորութիւն Ռուբին Ռուբինեանց:

Գլուհ Մետասաւերորդ ԵՒ ԵՐԿՈՏՍՍԱՆՆԵՐՈՐԴ

Հայատանի կամ Արմենիոյ միահեծան թագաւորութիւնը մարթ է ցԱրամ անդր 'ի վեր հանել, ըստ արտաքին պատմագրաց և պատմաբանորէն. այլ ասոտի և անդր 'ցեղապետութիւնք և եթ են և նախարարական վորչաթիւնք, և չէ կարելի պատմաբանորէն վճիռ հաստանել զորպիսութենէ նոցին, այլ ենթալրութեամբք գտանել. թէպէտ և հնոյն Հայուստանի աւանդութիւններն և նորացիւտ յիշատականի կը մատուցանեն մեզ թելինչ արփազնեան 'ի զիւտ անոնց ինքնավարութեան և քաղաքային կացութեան. Ասոր ապացոյցները տես աւելի բարդ աւած ժկ. և ժք. զիսոց մէջ 'ի Բագմ. Հանդ. հտ. Խթ. և Խզ. Պրակ Գ. և Ա. Էջ 345—324 և 44—46:

Գլուհ Երեւասաւերորդ

1. Թագաւորք Նոյիիրի, Աղձնեաց, Ծոփաց, Վահոյ կամ Մաննայ (ըստ սեպածե արձանագրութեան), Մշց (Մաւասարի), Միջտիսի կամ կարնոյ, և այլն, զոր ընծայեն մեզ բանասէք 'հանելով 'ի սեպածե արձանագրութեանց վանայ, էին ըստ մեզ անկախ 'ի թագաւորաց Արարատայ և երբեմն սիսերիմ թշնամիք, հաւանօրէն ևս օտարասեռ ժողովուրդներ: Ակայորդին և Պարսց հայկածինք էին. բայց նոյնը չէ մարթ ասել առանց տարակուսի Պարսցին յաջորդող ամենայն իշխա-

նաց համար, և ողբ կանխեցին քանը լզնա. Տիգրանէն ցվահէ և կողմէ իշխանք հաւանօրէն հայկաղունք էին:

2. Պարոյր եղաւ առաջինն յետ Արքամայ, որ զինու զօրութեամբ միացցց վերդիշեալ նահանգաց նախարարութիւնները Արտարատայ թագաւորութեան հետ, և եղաւ միահեծան տէր, նոյն ինքն իրբե գաշնակից Մա-

րաց՝ մեծամեծ դեր խաղաց Ասորեստաննեաց դէմ և 'ի կործանման նինաէի, և ինքն Արարատեան թագաւորութեան փառքը վերականգնեց, անոր գարական թշնամնցն անկմամբ: Այս մասիս արձանապրութեանցտուած հետաքրիական պատմութիւնն և անուանք տես 'ի բազմ. Հանդ. հտ ԽԴ. Պիրակ թ. Էջ 108—113:

#### Հ. ԲԱՐԵՎԵՂ. ՍԱՐԳԻՈՒԱՆ

### ԱՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱՅԻ

Հետեւեալ համառօտ տեղեկութիւնը Ստեղանոս Ռոշքայի վրայօք կը քաղենք Ասպովկ Պառոնչ հայուղի քահանացին կենացրութիւն ականաւոր Հայոց Փոստից անուամբ մատենէն, որ տապարեալ է 'ի Լէմաէրկ 1856 ամին, 'ի լիչ լեզու իսկ Ստեփանոսի Հայկանեան բառարանին վրայօք նշխագյուն տեղեկութիւն ստանալ փափարութաց, ցցց կու տամբ նոյն ըբրոց ցաց գրութած հմային ճառ. մը 'ի բազմացէպն 1853 ամին, էջ 86:

Ռոշքա Ստեփան, ոդի Ստեփանի Ռոշքա, ծնա 28 մարտի 1670 ամին, 'ի Կամենից քաղաք Փոստիցի, ի մանկութեան իւր հոգեսէր և հեղ բարուք՝ նշան տուաւ որ արժանաւոր է հոգեռուական կարգի. Քանի որոյ առաքեցաւ 'ի Հռովիմ, որ 'ի Ծաւալոցին Յ. Հաւատաց. իւր անհոնջ հետևողութեամբ յուտունու այնասի առաջ՝ որ արժանի եղաւ փիլիսոփաւութեան և աստուած արանութեան վարդապետ կազուելու: Քանի մի տարի վերը՝ քահանացանալով՝ դարձաւ 'ի Փոստից, հետո բերելով յանձնարարական նամակ մի առ ներկայացւցիչն Ա. Գահոն 'ի Լեհաստան:

Եռանդապին և անհոնջ քարոզելով զրան Տեառն, և հակերու 'ի վերաց այսուց Տեառն, քիչ տաենէն Սթանիսլավի ժողովրդաւութիւնը ձեռք առաւ: Ցետոյ եղաւ ևս Ա. Արքերց (decanus) Փոստից և Փոստից եկեղեցեաց: Մեծ գործունէութեան ցոյց տուաւ այս պաշտօնիս մէջ, որով վիշ տաենէն Մեծաւորի (official) պաշտօնն իրեն յանձնուեցաւ: Բարեկարգեց Փոստից, Փորոցի և Սթենլիութիւնը կազմով կը վարէին: Կա այն տասեակ անձանց կարգէն էր, որ արհամարհելով զփառս աշխարհի, միայն յերկինս առած էն իրենց աշ-

քերն, և առ որևէ կոխելով զամենացն՝ միայն Քրիստոսի օրինաց կը հետևին, և նորա դիմաց միտոյ ծունք կը կրկնեն, որոյ հարկ է որ զնեն ծունք ամենացն արտրածք Բնորութ պրիմ նու տուած էր ինքզինքը ճանապարհին փրկութեան, վասն որոյ մեծ եղաւ նորա գիտութեան և արդարութեան անսունն, և պատօգան էին նորա խօփերն ազգայնց առաջի: Սակայն մը մայն ազգայնիք նորա խորհրդով կը վարէին, այլ և սուպր գիտարակնուն պատահարաց միջոց, նորա խորհրդոց կը հպատակէին: Ի 1727 անհամանցնութիւն ծագելով կամենիցի Երրորդականաց և կարմելեանց մէջ, Սանգինի՛ նուի բակ Սրբազնին, կամենիցի Հոգիս եպիսկոպոսին յանձնեց այն գործը, և հաշուարար երկուց կողմանց ընտրութեամբ ամէն տարաձայնութիւնք բարձան և երկու կողմէն ևս գոհ մասցին:

Այս երեսի մանձ իւր արդիւնապից, երկիւրած և աշխատաւոր կեանքը կնքած է 'ի 31 Հոկտեմբերի, 1739, 'ի Սթանիսլավով քաղաքի: ուր յորձանազբաժեամբ ամէն տարաձայնութիւնք զրած կայ այսօքէ»: Stephanus Roscka singularis doctrinæ, eruditio[n]is ac pietatis Praelatus, plurimis scæulis memorandus, qui editis plurimorum voluminibus, vere cum sole dispersit manus suas ab Occidente in Orientem plenus dierum et moritorum confessus et sacra syno[psi] refectus obiit.

Իւր երկասիրութիւնքն են հետևեակին: Արիստոտելի Փիլիսոփայութիւնն, և հատոր Աւտուածաբանութիւնն գլորոցական, և հատոր Բառարան հայ-լիճ, լիճ-հայ. Կենսագրութիւնն եպիսկոպոսաց Հայոց 'ի Լեհա. Մաշտոց Հայոց գրեալ 'ի նմանէ ի թեսմինից: